

Boston



# Diocese of the Armenian Church of North America

314 East 35th Street, New York 16, N.Y. ★ Murray Hill 6-0710

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian

Primate

Թիւ 72

Փետրուար 17, 1959

Արժանաշնորհ  
Տ. Բաբգէն ԳԵՆԻ. Մագսուտեան  
Նախագահ Միակեան Խորհուրդի  
Ս. Մարտիրոսիւն Եկեղեցւոյ  
Պոստոն.

Սիրելի Տէր Բաբգէն,

Ստացանք 1959 Փետրուար 16 թուակիր Ձեր գեղեցիկ պատրաստած  
Միակեան Տեղեկագիրը, որով կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ գու-  
մարուած Միակեան Ժողովին մէջ ընտրուած են Միակեան Խորհուրդի անդամները,  
եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն  
վերաբացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալները ըստ օրինի ընտրուած են  
եւ իրենեւ եկեղեցւոյդ զարտաճանաչ անդամներ կը վայելեն ընտրողներու  
վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով.

Տիարք՝ Խորէն Խօլլիկեան  
Փիթըր Ազամեան  
Կարապետ Թաշեան  
Արամ Հինգիլեան  
Տան Սուրսուրեան  
Զօր. Մարգիս Զարգարեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզ եւ պատ-  
ուարժան Միակեան Խորհուրդիդ համախոհ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի  
պայծառութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի